

Կրթություն

Շաբաթերը «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 01.02.2023թ. չորեքշաբթի թիվ 5 (1082)

Շնորհավո՛ր տոնդ, Հա՛յ գինվոր Հունվարի 28-ին երկիրը նշեց Հայոց բանակի օրը

21-րդ դարը մե՛րն է լինելու (Վազգեն Սարգսյանի մտքերից)



➤ Ես վախենում եմ մեր հասարակության այսօրվա անտարբերությունից՝ հնարավոր ռազմաքաղաքական բարդությունների նկատմամբ: Սթափվել է պետք, առջևում ծանր անակնկալներ կան:

Ես վախենում եմ ընդդիմության ատելությունից՝ բանակի նկատմամբ: Սթափվել է պետք, դա նաեւ ձեր եւ ձեր երեխաների պաշտպան բանակն է:

Ես վախենում եմ իշխանությունների թուլացող ուշադրությունից՝ բանակաշինության նկատմամբ: Սթափվել է պետք, պատերազմը դեռ չի ավարտվել:

Վերջապես ես վախենում եմ բոլոր չվախեցողներից, անտարբերներից, արկածախնդիրներից, ժողովրդի բոլոր հնարավոր «փրկիչներից»:

➤ Աշխարհի ուժեղները, տեսե՛ք, թե ուր են հասել, իսկ մենք դեռ մտածում ենք՝ շտապել, թե չշտապել, «ըսել, թե չըսել»: Ինչի՞ն սպասել՝ Հայաստանի տնտեսության վերջնական կանգառի՞ն... Հայաստանի հայաթափմա՞նը, թե՞ մինչեւ աղանդավորները առաքելականներիցս ավելի մեծ թիվ կկազմեն...

➤ Մեր պրոբլեմների մի 30-40 տոկոսը մակերեսի վրա եղած հարցեր են: Քարը ծուռ էր դրված՝ պետք է վերցնել, շտկել, ու կավարտվի այդ պատմությունը:

➤ Ոչ մի ծրագիր, որքան էլ այն փայլուն լինի, չի կարող իրականություն դառնալ, եթե չկա հավատք, նպատակին հասնելու համախմբվածություն, եթե մեզանից յուրաքանչյուրը չի մտածում, որ այս երկրի ճակատագիրը կախված է մի մարդուց, եւ այդ մարդն ինքն է: Եթե համոզված չէ, որ մենք, միայն մենք ենք կառուցելու մեր տունը: Եվ վերջապես, ավելի լավ է մեկ մոմ վառել, քան հավերժ բողոքել խավարից: Օգնենք, որպեսզի յուրաքանչյուրս վառի իր մոմը, եւ համոզված եմ՝ մոտ ապագայում Հայաստանը կհայտնվի լույսի մեջ:

➤ Ամեն բան չափից ավելի ակնհայտ է. դարձ սկսել ենք ողբերգությանը, շարունակել ենք ձեռքբերումներով ու կորուստներով, պարտավոր ենք ավարտել հաղթանակով:

➤ Պատմությունը ցույց է տալիս, որ հաղթում են այն ժողովուրդները, որոնք ավելի կազմակերպված են և ռազմիճակ:

➤ Հայ ժողովուրդը չի պարուն իր տառապանքին ու տաղանդին արժանի կյանքով ...

➤ Մենք իրավունք չունենք թույլ տալ այնպիսի շռայլություն, ինչպիսին է տասնյակ կուսակցությունների եւ հոսանքների գոյությունը: Այս քաղաքական դաշտը պետք է կանոնավորվի, ինչպես հատուկ է քաղաքակիրթ երկրներին:

Հայաստանում էլ պետք է գործեն 3-4 դասական ուժեր, ավանդույթներ ունեցող եւ ավանդույթներ ձեւավորող, քաղաքական հստակ դեմք ու նկարագիր ունեցող եւ իր հետեւից ժողովուրդ տանող կուսակցություններ:

Այլապես, այս բզկտվածությունը կբերի նաեւ հասարակության բզկտվածության:

շարունակությունը՝ էջ 2



Վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա առիթով



Սիրելի՛ ժողովուրդ, Սիրելի՛ հայրենակիցներ,

Հայկական բանակի զինծառայողներ, պահեստազորայիններ, զեներալներ, սպաներ, ժամկետային եւ պայմանագրային զինծառայողներ, Այսօր մենք նշում ենք մեր բանակի կազմավորման 31-րդ տարեդարձը եւ առաջին հերթին ոգեկոչում ենք մեր այն նահատակների հիշատակը, ովքեր իրենց կյանքն են տվել հանուն Հայրենիքի:

շարունակությունը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա առիթով



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր օրինությունն ու բարեմաղթանքն ենք բերում Հայոց բանակի սպաներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:

Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախության վերահաստատման տարիներին, դարձավ պատվարն ու պահպանը մեր վերածնյալ պետականության, երաշխավորը մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կյանքի: Մեր խիզախ զորավարների ու զինվորների քաջագործություններով, նաեւ բանակին սատարող մեր ժողովրդի պայքարով ազատագրվեց Արցախ աշխարհը, եւ արցախահայությունը իր անկախ կյանքը կառուցելու հնարավորությունն ունեցավ:

Արցախյան 44-օրյա աղետալի պատերազմը, անցյալ տարվա սեպտեմբերին Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգությունները, հառնած մարտահրավերները եւ պաշտպանական լրջագույն հիմնահարցերը մեր հրամայականների առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին:

շարունակությունը՝ էջ 3

Եթե հայ ես, ուրեմն՝ գինվոր ես, անկախ նրանից՝ սուր է ձեռքինդ, խաչ, բահ, թե գրիչ

21-րդ դարը մե՛րն է լինելու

(Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկիզբը՝ էջ 1

Կան վճռական պահեր ժողովուրդների և պետության կյանքում, երբ պիտի ի հայտ գան վճռական գաղափարներ և այդ գաղափարներն իրագործող մարդիկ, որ կկարողանան ժողովրդին իրենց հետևից տանել: Հազվագյուտ բարեբախտություն է, երբ ժամանակը, ժողովուրդը և առաջնորդները գտնում են իրար:

1988թ. այդպես էր: Շատ կարճ տեւեց: Ցավոք սրտի: Ժամանակի պահանջը, ժամանակի ոգին և ժամանակի առաջնորդները իրար համապատասխանեցին: Մեզ խանգարեց անհանդուրժողականությունը:

Ես երջանիկ մարդ եմ: Որովհետեւ ինձ պատիվ ընծեմվեց իրականացնել այն երազանքները, որպիսիք փայփայում էինք գրողներս, լրագրողներս: Բայց դա բախտի բան չէ, ես եմ ընտրել իմ ճանապարհը: Երբ այդ ուղին ընտրեցի, չգիտեի, որ նախարար եմ դառնալու: Իմ գրած նախադասությունների համար չեմ կարծում, կեղծիք չկա: Ես հիմա էլ, որպես պաշտպանության նախարար, ինչ անում եմ, դարձյալ կեղծիք չկա: Մխավունքներ կան, բայց կեղծիք չկա:

Եթե ուզեի, կունենայի ավելի շատ հետևորդներ, քան կողմնակիցներ: Բայց ուզում եմ ունենալ կողմնակիցներ, որոնք նվիրված լինեն ոչ թե ինձ, այլ այն գործին, որը ես անում եմ:

Ես իմ գործին շատ եմ հավատում:

Ես օրվա եւ մոտակա նպատակներ դնող եւ լուծող մարդ եմ: Այդ տեսակն եմ: 1989-ին, երբ խոսվում էր բազմաճակատային պայքարի մասին, մենք Արարատում ստեղծեցինք մեր ինքնապաշտպանական ջոկատը, երբ ամբողջ հայ ժողովուրդը մտածում էր բազմաճակատ պետություններ ձեռք բերելու մասին, մենք մեր ջոկատը զինեցինք որսորդական հրացաններով և ինքնաշեն նռնակներով: Հետո, երբ բոլորը խոսում էին ռմբակոծիչների մասին, ես, արդեն որպես պաշտպանության նախարար, հայթայթում էի ավտոմատների առաջին չափաբաժինը: Հետո, երբ բոլորը խոսում էին հեռահար կայանքների մասին, ես փորձում էի Հայաստանի նորաստեղծ բանակի համար հրետանու միջոցներ և ինքնաթիռներ ճարել: Եվ այսպես շարունակ: Արդյունքում՝ այսօր Արարեջանն աղմկում է արդեն մեր հեռահար հրթիռների, Հայաստանի՝ որպես ատոմային պետության մասին: Կրկնում եմ՝ ես օրվա խնդիրներ դնող եւ մոտակա նպատակներ իրագործող մարդ եմ:

Ամեն ինչ խառնվել է իրար, երրորդ դասարանի կրթությամբ որեւէ դուրսարժուկ մեկ ավտոմատով ու չորս դանակով կարող է ազգի ճակատագրի հետ կատակներ անել: Հրեշավոր կասկածն ու անհանդուրժողականությունը սրտներումս՝ վաղը ո՞նց ենք մեկնելու ֆիկուսը ապահովելու: Միասնությունից խոսելով հոգնեցիք, Նժդեհի ցիտելով հոգնեցիք, ու բան դուրս չեկավ... Հապաղելու իրավունք չունենք: Շտապենք, քանի դեռ մութ ուժերը մեզ իրար դեմ չեն հանել, քանի դեռ ժողովուրդը, այնուամենայնիվ, հավատում է մեզ:

Միասնությունը կարող է սարեր շուռ տալ: Կարող է աշխարհ զարմացնել: Նաեւ դառնալ փաստարկ նույն աշխարհի համար: 21-րդ դար հաղթանակած, պատվով մտնելու մեր միակ երաշխիքն է միասնությունը:

Երանի մեր բոլոր քաղաքական կուսակցություններն ու անհատներն այդ գիտակցությամբ առաջնորդվեն: Երանի նրանց օրինակ ծառայի, ոգեւորի պարզ ու պինդ տղաների՝ իրենց հին ու նոր ընկերների օրինակը:

Ժողովրդին պետք է ուղղորդել, պետք է առաջնորդել, պետք է դաստիարակել: Աշխարհում չկան ուժեղ ու թույլ ժողովուրդներ: Պատմության ընթացքի ինչ-որ մի պահի ի հայտ են գալիս մարդիկ, որ կարողանում են ճիշտ ուղղորդել իրենց ժողովուրդներին: Այդ հազվագյուտ պահերը կամ օգտագործվում են, կամ չեն օգտագործվում: Եթե ճիշտ ես ուղղորդում, ժողովուրդը ճիշտ ընթացքով է գնում: Հատկապես մեր ժողովուրդը իր գեներով, իր տեսակով, իր մշակույթով ավելի ընկալունակ է եւ ավելի ուժեղ:

Ասել եմ, էլի կասեմ՝ մեր պատերազմը քաջության, հերոսության փուլից արդեն անցել է դեպի տնտեսական-քաղաքական փուլ: Միայն հզոր տնտեսությունը կարող է ապահովել հզոր բանակի գոյությունը: Մեզ մոտ անբնական բան է կատարվել, որ բանակը առաջ է ընկել պետությունից: Այս միտումը հղի է լուրջ վտանգներով: Հզոր պետության քարտիչ ուժը տնտեսությունն է: Այն պետք է առաջիկա տարիների ընթացքում կարողանա հասնել եւ անցնել բանակից: Պետության գերխնդիրն է սա:

շարունակությունը՝ էջ 3

«Մեզ անհրաժեշտ է ուժեղ եւ պրոֆեսիոնալ բանակ»

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ զինված ուժերի կազմավորման 31-րդ տարեդարձի առթիվ այցելել է Պաշտպանության նախարարություն, որտեղ տեղի է ունեցել հավաք-խորհրդակցություն՝ ՁՈՒ բարձրագույն սպայակազմի մասնակցությամբ:

Խորհրդակցությանը ներկա են գտնվել նաեւ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանը, Ազգային ժողովի Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արմեն Աբազյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Միջոցառման սկզբում դահլիճ են բերվել Հայաստանի Հանրապետության պետական, Ձինված ուժերի մարտական եւ Հայոց բանակի պահապան Սուրբ Աշոտ Երկաթ դրոշմերը, որից հետո հնչել է ՀՀ օրհներգը: Այնուհետեւ ներկայացվեցին մեկ րոպե լուսությամբ հարգանքի տուրք են մատուցել հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզում տեղի ունեցած ողբերգական դեպքի հետեւանքով զոհված զինծառայողների հիշատակին:

Ելույթով նախ հանդես է եկել



Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, այնուհետեւ ներկայացրին է դիմել վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Իր խոսքում, վարչապետը նշել է.

«Պաշտպանության հարգելի՛ նախարար,

Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Գլխավոր շտաբի պետ,

Անվտանգության խորհրդի հարգելի՛ անդամներ,

Պարոնայք գեներալներ եւ սպաներ, Հարգելի՛ ներկայացրեցի՝

Շնորհավորում եմ բոլորիս՝ մեր բանակի ձեւավորման 31-րդ տարեդարձի առթիվ եւ ուզում եմ առաջին հերթին բոլորիս մաղթել կամք, որը հենված է իմացության վրա: 31 տարիների պատմությունը վերլուծելով՝ մենք պետք է

արձանագրենք հետեւյալը, որ բանակի եւ պետության որակական կապը շատ ուղիղ է: Այս կապը մեզ պիտի պարտադրի, որպեսզի բանակի եւ պետության որակի գարգացումը մեր ամենօրյա աշխատանքը լինի: Բայց սրա համար մենք պետք է առերեսվենք խնդիրներին: Երբեմն հաճախ ու շատերին թվում է, թե մենք լրիվությամբ խորացել ենք պրոբլեմների մեջ: Իրականությունն այդպես չէ, եթե նույնիսկ մենք խորացել ենք այդ պրոբլեմների մեջ՝ չենք առերեսվել դրանց: Կարծում եմ, որ մենք հենց այստեղից պետք է սկսենք, որովհետեւ մեր բոլոր գործողությունները պետք է հիմնված լինեն իմացության եւ ճանաչողության վրա»:

շարունակությունը՝ էջ 4

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա առթիվ

սկիզբը՝ էջ 1

Բոլոր դժվարություններին հանդիման հենց նրանք են մեզ ոգեշնչում եւ լիցքավորում գիտակցությամբ, որ հանուն պետականության, հանուն ինքնիշխանության, անկախության ու անվտանգության մեր պայքարը չի կարող ձախողվել, եթե կա նվիրում, եթե կա հավատ:

Այսօր հազարավոր նվիրյալներ ծառայելով հայկական բանակում՝ ծառայում են Հայաստանի Հանրապետությանը, անկախությանը, ինքնիշխանությանը, պետականությանը, եւ մենք ամեն ինչ պիտի անենք, որ նրանց ծառայությանը որակը փոխվի: Փոխվի նրանց մատուցած ծառայության որակը, փոխվի նրանց մատուցվող ծառայության որակը:

Սա է պատճառը, որ կառավարությունը լայնածավալ բարեփոխումներ է ձեռնարկել բանակում, որոնց նպատակը յուրաքանչյուր զինվորի, յուրաքանչյուր սպայի ավելի կարող ու պրոֆեսիոնալ, միեւնույն ժամանակ, ավելի բարեկեցիկ դարձնելն է:

Այդ բարեփոխումների հիմքում զինվորական կրթության բարեփոխումներն են, որոնք նույնպես գտնվում են իրագործման փուլում: Ներկայումս ձեռնարկում ենք նաեւ սպայական ավագ դպրոցի հիմնումը, որը մեր պատկերացմամբ պիտի լինի ժամանակակից լավագույն չափանիշներին համապատասխանող կրթօջախ եւ սպայական նոր դասի ձեւավորման դարբնոց պիտի դառնա:

Առաջիկայում պլանավորում ենք բոլորովին նոր կանանց կամավոր-ժամկետային զինծառայության ինստիտուտը ներդնել Հայաստանի Հան-

րապետությունում, եւ այսօր գնահատանքի հատուկ խոսքեր պիտի ասեմ մեր այն քույրերի հասցեին, ովքեր պայմանագրային ծառայություն են իրականացնում մեր բանակում, այդ թվում՝ մարտական ծառայություն:

Ընթացքի մեջ է եռամսյա վարժական հավաքները մեկամսյա կամ 25-օրյա վարժական հավաքներով փոխարինելու գործընթացը, որովհետեւ պահեստազորի մարտունակությունը կարեւոր է նույնքան, որքան կանոնավոր զինծառայության մեջ գտնվողներինը:

Միջոցներ ենք ձեռնարկում մեր բանակը ժամանակակից սպառազինությամբ եւ տեխնիկայով համալրելու ուղղությամբ՝ փորձելով առավելագույն քաջալերել նաեւ տեղական արտադրողներին:

2018 թվականի նկատմամբ 2023 թվականի պաշտպանական բյուջեն ավելի քան կրկնապատկվել է, եւ նաեւ այս առիթով ուզում եմ շնորհակալություններ ասել մեր այն բոլոր հարկ վճարողներին, ովքեր իրենց աշխատանքով եւ օրինապահ պահվածքով հնարավոր են դարձնում բարեփոխումների իրականացումն անվտանգության եւ այլ ոլորտներում:

Բայց բարեփոխումների գործընթացն անցնում է ընթացում նաեւ բանակում, որովհետեւ անվտանգային անկայուն միջավայրը նորանոր մարտահրավերներ է բերում, որոնք երբեմն սադրում են կոպիտ սխալներ:

Հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղի ունեցած ողբերգությունը, որ մեր եւս 15 զավակների կյանք խլեց, խեղդում է մեզ: Եվ ուզում եմ ներողություն խնդրել իրեշավոր հրդեհին գոհ գնացած բոլոր զինվորների ծնողներից եւ հարազատներ-

րից: Ներողություն եմ խնդրում նաեւ բոլոր այն ծնողներից, որոնց զավակները բանակում գոհ են գնացել ոչ կանոնադրական հարաբերությունների, պետության կամ կառավարության թույլ տված բացթողումների ու սխալների հետեւանքով ծագած անթույլատրելի հարաբերությունների ու իրավիճակների:

Միեւնույն ժամանակ, ծնկի եմ գալիս մեր այն զինվորների, սպաների, կամավորների ծնողների ու հարազատների առաջ, ովքեր Հայրենիքը պաշտպանելիս ընկել են մարտում: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այդ ընտանիքներին, որտեղ կաթի ու հացի հետ ներմուծվել է գիտակցությունը, որ հանուն Հայրենիք-Պետության, հանուն քաղաքացիական պարտքի չի կարելի խնայել ոչինչ: Այս ընկալման ու գիտակցության վրա եմ կառուցվում պետությունները:

Եվ ի վերջո, շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն զինծառայողներին, շարքայիցներից մինչեւ սպա եւ գեներալ, ովքեր անձնվիրաբար ծառայություն են մատուցում Հայկական բանակին, Հայոց պետականությանը: Եղբայրական ողջույններ եմ հղում Բանակի օրը երբեմն ձյան մի քանի մետրանոց շերտով շրջապատված մարտական դիրքերում անցկացնող մեր եղբայրներին եւ քույրերին:

Արեւը ծագելու է, գարունը գալու է: Շնորհավոր Հայկական բանակի օրը: Եվ ուրեմն՝

Կեցցե՛ Ազատությունը,
Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը,

Կեցցե՛ն մեր երեխաները, որ ապրելու են Ազատ եւ Երջանիկ Հայաստանում:

Աշխարհի հետ

Հայ-եգիպտական բարձր մակարդակի հանդիպումներ

Հանրապետության նախագահի նստավայրում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահներ Վահագն Խաչատրյանի և Աբդել Ֆաթհի Ալ-Սիսիի առանձնագրույցը, որին հաջորդել է երկու երկրների պատվիրակությունների հանդիպումն ընդլայնված կազմով:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ստորագրել է միջուկորտային համագործակցության հուշագիր: Երկու երկրների նախագահների մասնակցությամբ ստորագրվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև գիտական և տեխնոլոգիական համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության երիտասարդության և սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության մասին»,




«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և «Եգիպտոսի Արաբական Հանրապետության երիտասարդության և սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության մասին»,

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատրյանի ուղերձը՝ Բանակի օրվա առթիվ

Հարգելի՛ հայրենակիցներ, Սիրելի՛ զինվորներ և սպաներ, Շնորհավորում եմ ձեզ՝ մեր Բանակի օրվա և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման 31-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հայկական բանակը ստեղծվեց մեր պետականության և անկախության կերտմանը զուգընթաց, եւ իր ծեսավորման պահից բանակի գերագույն կոչումն ու առաքելությունը մեկն էր՝ մեր հայրենիքի սահմանների, մեր քաղաքացիների անվտանգության պահպանությունն ու պաշտպանությունը և մեր երկրում խաղաղության երաշխավորումը:

Անցած տասնամյակների ընթացքում մեր Ձինված ուժերը ծանր փորձությունների միջով անցան՝ ճաշակելով էլ հաղթանակի բերկրանք, էլ կորուստների դառնություն, բայց մեր բանակի վերջնական նպատակը մնացել է միշտ նույնը՝ ապահովել խաղաղություն մեր ժողովրդի համար:



Խաղաղ, անվտանգ ու պաշտպանված հայրենիք ունենալու համար հազարավոր հայրերի և մայրերի իրենց կյանքը, խոնարհվում եմ նրանց հիշատակի առաջ:

Սիրելի՛ հայրենակիցներ, Ձինված ուժերի 31-րդ տարեդարձը նշում ենք պետականության համար վճռական ժամանակաշրջանում: Այսօր դեռ ապաքինված չեն 44-օրյա պատերազմի վերքերը, հակառակորդները շարունակում են իրենց ագրեսիվ հռետորաբանությունը և վերջինիս մենք, որպես պետություն, կարող ենք հակադրել միայն ժամանակակից, կա-

յացած, ամուր ու պրոֆեսիոնալ բանակ:

Ձինված ուժերի վերափոխման ու բարեփոխման գործում մենք, անշուշտ, դեռ շատ անելիքներ ունենք, բայց այդ գործում առավել էական է, թե որ սկզբունքներն ու հայեցակարգն են լինելու մեր ուղեկիցները: Այդ գաղափարները հստակ են՝ խաղաղություն, մեր պետության սահմանների ու ինքնիշխանության պաշտպանություն և անվտանգություն: Հենց այս նպատակներին հասնելու համար բանակին անհրաժեշտ է Հայաստանի քաղաքացիների և աներկբա զորակցությունը, որովհետև բանակն ինքնաբավ ու ինքնուրույն մի կառույց չէ, այլ մեր հասարակության խտացված արտացոլանքն ու պետական մտածողության բյուրեղացման արդյունքը:

Սիրելի՛ զինվորներ և սպաներ, Մեկ անգամ ես շնորհավորում եմ ձեզ՝ Բանակի օրվա կապակցությամբ և մաղթում խաղաղություն, տոկունություն և ամուր կամք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը՝ Բանակի օրվա առթիվ

սկիզբը՝ էջ 1

Այս ծանր իրավիճակում առաջնային և հրատապ է բանակի արդիականացումը՝ ժամանակի չափանիշներին ու պահանջներին համապատասխան: Առաջնային և հրատապ է ազգային ողջ ներուժի համախմբումը, որպեսզի Հայոց բանակը շուտափույթ հաղթահարի պատերազմի պատճառած աղետալի հետեւանքները, ամոքում գտնեն անդառնալի կորուստների վերքերն ու ցավերը, և բացառվեն այնպիսի

սի ողբերգություններ, որ ապրեցինք շաբաթներ առաջ:

Հավատում ենք, որ Հայոց բանակը պիտի վերագտնի փառքի իր ճանապարհը և կարող լինի անցկուն ու հաղթական իրագործել իր սրբազան առաքելությունը:

Ի խորոց սրտի աղոթում ենք հայրենիքի պաշտպանության համար նահատակության պսակն ընդունած բոլոր քաջորդիների համար: Հայցում ենք երկնավորից, որ միխթարություն պարգևի կորուստներից ու վշտերից

բեկված հոգիներին: Թող Ամենակալն Աստված Իր պահպանությունն ու զորակցությունը շնորհի Հայոց բանակի քաջարի զինվորներին ու հրամանատարական կազմին, խաղաղություն ու բարօրություն՝ Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին և աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

«Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Յօրէ մերմէ և ի Տեսնէ Յիսուսէ Քրիստոսէ» (Հռոմ. 1.7) այսօր և միշտ. ամեն:

21-րդ դարը մե՛րն է լինելու

(Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկիզբը՝ էջ 2

Ճողովուրդը պիտի տեսնի իր զոհողությունների արժեքը, նա պիտի տեսնի թունելի վերջում շողարձակող լույսը: Վերջին ամիսներին մենք դարձյալ սկսել ենք ճոխ թաղումներ կատարել, բոլորս մեր ընկերների շիրիմներին երդվում ենք, որ նրանց կիսատ թողած գործը կշարունակենք: Հիմա եկել է դրա ժամանակը:

Քաղաքական բոլոր տեսությունները, գաղափարական սիստեմներն ու կուսակցական կրթերն անցողիկ են: Կա ազգային շահերի երկաթյա օրենք: Իսկ ազգը, պետությունը միայն կուսակցությունները չեն: Դա նույնիսկ այս ժամանակահատվածում, այս փոքրիկ հողի վրա ապրող 4 միլիոն հայերն չեն: Ազգը հանդես է գալիս հազարամյա անցյալում և ապագայում, որոնք միատիկական հավատի և մնայուն արժեքների միավորման մեջ ստեղծում են Հայաստանի կերպարը և տեղը այս արեւի տակ: Մինչդեռ, ցավոք, այնքան ենք մանրացել, այնքան ենք դառել օրվա կրթերի ու քաղաքական կոնյունկտուրայի գերին, որ կորցրել ենք անցյալի ու ապագայի զգացողությունը: Մեր ներքին ժանգը մեզ ներսից ուտում ու պառակտում է մեզ, պառակտում է մեզ, պառակտում է մեր ժողովրդին: Ճողովուրդը կորցնում է հավատն իր ներուժի նկատմամբ, և սա ամենասարսափելին է: Մեր արած լավ գործերն անգամ մենք չենք կարողանում նկատել: Բացասման բացասումը մեր տունը քանդում է կամ կարող է քանդել:

Հասել է ուժեղի, ոգով ու ժողովրդով ժամանակը: Ով ամուր եղավ, նա էլ հաղթելու է: Փառք Աստծո, մինչև էլ հիմա էլ մեր նվաճումները, հաղթանակներն անհամեմատ ակնառու են եղել, քան կորուստները, պարտությունները: Մեզմից, միմիայն մեզմից է կախված, թե, ի վերջո, ինչպես է լուծվելու Դարաբաղի հարցը:

Պատմությունն այսօր էլ մեզ հրաշալի հնարավորություն է ընձեռել վերհիշել մեր նախնայաց փառքը, հասնել ժամանակի գնաքթին: Ավելին՝ մեր ողջ պատմության ընթացքում մենք երբեք ավելի մոտ չենք եղել մեր վերջնական հաղթանակին. էլի մեկ-երկու լիարժեք քայլ. էլի մի քիչ համբերություն, փոխադարձ հանդուրժողականություն, և 21-րդ դարը մերն է լինելու:

Մենք մեր ազգային պատերազմը անընդհատ հետաձգել, բերել-հասցրել ենք 21-րդ դարի շեմին, հիմա էլ նստենք-մտածենք, թե այդ կռվում արժե, թե չարժե զոհվել: Ծիշտ եմ արել, որ կենաց ու մահու ընտրության կոչով եմ դիմել: 1915 թ. առանց լուրջ դիմադրության թողեցինք, որ մեզմից միլիոն ու կեսին կտորեն: Տասնյակ հազարավոր մարդիկ այս ընթացքում զոհվեցին բնական աղետներից: Տարիներ հետո սերունդները մեր մասին դատելու են ոչ թե նրանով, որ 1989-1995թթ. հինգ հազար հրաշալի զինվոր կորցրինք, այլ այսպես՝ ստեղծեցինք պետություն, թե՞ ոչ, պաշտպանեցինք մեր հայրենիքի սահմանները, թե՞ ոչ: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ժամանակային ինչ-որ հանգրվանում իրենց պատերազմը տվել են: Հաղթել են, պետություն են ստեղծել այն ժողովուրդները, որոնք պատերազմի կես ճանապարհին չեն հոգնել: Ռուսները, երբ զգացին, որ բանակների պատերազմում տանուլ են տալիս Նապոլեոնին, հնարեցին Հայրենական պատերազմը: Եվ դա ամենագեղեցիկ բանն է, որ երբեւէ հնարել է որեւէ ժողովուրդ: Ասելս այն է, որ պատմության շառավիղներում մենք չցուցաբերեցինք համապատասխան կամք, հավաքականություն, չունեցանք մեր 50 հազարամոց բանակը, չունեցանք Հայրենական պատերազմ հնարելու ռուսական հրաշագործ միտքը, այլապես այսօր ֆրանսիացու պես կճանփորդեինք, կսիրեինք, դեմոկրատիա կխաղայինք, մարդու իրավունքներից կխտսեինք, կենդանիների և բնության պահպանության շարժումներ կծավալեինք, կովկասյան տուն կառուցելու գաղափար կնոգոնեինք:

Հայ ժողովուրդը վերջին ... տարիներին համազգային սփրանք է գործել, և անչափ ցավալի, ճակատագրական կլինի, եթե թյուրիմացությունների, անվստահության, անմիաբանության պատճառով հանկարծ տանուլ տանք արյունով ու մաքառումներով ձեռքբերվածը:

Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում գոնե մեկ անգամ իր կռիվը պիտի մինչևե վերջ տա: Աշխարհի ուժեղներն այդ բանը արել են միջին դարերում, մյուսները՝ ավելի ուշ, և յուրաքանչյուրն ըստ արժանվույն իր տեղն ու դերն ունի այս արեւի տակ:

Ճողովուրդ, պատերազմը չի ավարտվել: Չի ավարտվել: Աստված գիտի՝ ինչ է լինելու: Մի քիչ թուլացանք, պարտվելու ենք: Ձգո՛ւն եղեք, որ չպարտվեք:

Մտածեք էս երկրի մասին: Մտածեք էս բանակի մասին. սա է էս երկրի փրկությունը: Սա է, էսօր, ցավալիորեն, ամենակայացած արժեքը: Ցավալիորեն:

Մտածեք էս երկրի մասին: **շարունակությունը՝ էջ 4**

21-րդ դարը մե՛րն է լինելու (Վազգեն Սարգսյանի մտքերից)

սկիզբը՝ էջ 3

Կարելի էր ժողովրդի ոգին է: Ոգով եւ սոցիալական ավելի վատ պայմաններով կարելի է պատմական կտրվածքով հերոսություններ անել: Առանց ոգու՝ սոցիալական ամենալավ պայմաններում անգամ կարելի է դառնալ անդեմ, անգույն եւ աշխարհի հզորների հետ նույն սեղանի շուրջ նստելու իրավունք չունեցող մի զանգված:

Տարածաշրջանը, ուր մենք ապրում ենք, լավագույններից չէ նաեւ բարոյական չափանիշների իմաստով, մեր ոչ մի հարեւանից մենք բարձր կազմակերպվածության, կարգապահության, պետականության դասեր առնել չենք կարող: Ել չեն խոսում տարածաշրջանային մենթալիտետի համարում ստացած կաշառակերության մասին: Եվ եթե մեր հարեւաններից յուրաքանչյուրը Մեծ Աշխարհի հետ հարաբերություններում այս ամենը կոմպենսացնող որեւէ ծանրակշիռ խաղաքարտ ունի՝ ծավալային, քանակային, ռեսուրսային, ապա մեզ մնում է մյուսներից ուղղակի մեկ գլուխ ավելի կազմակերպված, նպատակալաց, բարոյական լինել վերջապես: Ակնհայտ ճշմարտություն է, որ լավ հավաքված փոքրը, քիչը՝ հաճախ ավելի ուժեղ եւ հզոր է, քան վատ հավաքված մեծն ու շատը՝ լինի դա պետություն, բանակ, թե ընտանիք:

Եթե մենք իսկապես պետական այրեր ենք եւ մեր պետությանը նայում ենք ոչ թե մեկ օրվա կտրվածքով, այլ հավերժության, պետական ծրագիր պիտի մշակենք: Այսօր այդ ծրագրերի մասին խոսելը նույնիսկ ծիծաղ կարող է առաջացնել, որովհետեւ առօրյա խնդիրների մեջ այնքան ենք խրված, եւ այնքան լուծված չեն այդ խնդիրները, որ հեռանկարային ծրագրերի մասին խոսելն ապագայի խնդիր է թվում: Բայց այդպես չէ: Ամենուր ասել եմ, ձեզ էլ եմ խնդրում՝ չհուսահատվեք: Մեր բոլորի վիճակը, ամբողջ ժողովրդի վիճակն իսկապես ծանր է, բայց անհուսալի չէ: Մենք, հիշենք, ավելի ծանր տարիներ ու ավելի ծանր օրեր ենք ունեցել: Հայրենական մեծ պատերազմից հետո, նաեւ այս պատերազմի տարիներին 1991-1992թթ.: Հաղթահարեցինք, ապրեցինք: Սա էլ ենք հաղթահարելու: Անկասկած, հաղթելու ենք նաեւ տնտեսական պատերազմում: Հայ ժողովուրդն աշխատող, ստեղծագործող ժողովուրդ է, երբեք անհրաժեշտ է նրան ուղղակի չխանգարել: Բարության դաշտ է պետք, փոխըմբռնումի դաշտ է պետք, վստահության դաշտ է պետք: Մեր ամենամեծ ցավն անվստահությունն է, վստահության ճգնաժամը: Մենք կարողանալու ենք դա հաղթահարել, եւ ինչ-որ բան այս երկրում, անկասկած, փոխվելու է: Վերջապես, մեզ հետ, թե առանց մեզ, դուք անպայման ոտքի եք կանգնելու: 21-րդ դարը հաստատ ձերն է լինելու, բոլորովին չկասկածելով:

Ես ասում եմ՝ դավաճանություն է ժողովրդին ներշնչել, թե ինքը փոքր է ու անզոր: Երեք միլիոն, թե երեք հարյուր միլիոն՝ օրհասի պահին պայքարողը շատ-շատ մեկ միլիոնն է: Իսկ մեկ միլիոն անձնուրաց պայքարող ազգն իր միջից կարող է հանել: Ապացուցված բան է: Մի բան է միայն անհրաժեշտ. սնապարծության ու արկածախնդրության փոխարեն՝ լրջմտությունն է պատասխանատվություն: Որպեսզի դուրսպրծուկները կուրծք ծեծելու ասպարեզ չունենան: Որպեսզի ինքնապաշտպանության գործը չվերածվի ինքնասպանության: Ես գործը պետական մոտեցում է պահանջում եւ ենթադրում է պետականություն: Պահը չկորցնենք, հապաղելը հանցագործություն է, տղերք:

Ես հավատում եմ Հայաստանի ապագային: Ես հավատում եմ մեր տնտեսական, գիտական ներուժին: Ես համոզված եմ, որ ինքնեքս ենք մեր տունը կառուցելու, բոլորս միասին: Ես համոզված եմ, որ միայն միասնականության դեպքում՝ ոչ մերկապարանոց բացականչությունների, այլ իրական, գիտակից միասնականության դեպքում միայն դրական լիցքերով մենք կարող ենք ոտքի կանգնեցնել մեր երկիրը: Պիտի կրկնեն իմ խոսքերը՝ Հայաստանը երբեք ավելի մոտ չի եղել վերջնական հաղթանակին: Մենք ունենք կայուն, մնայուն արժեքներ: Կայուն, մնայուն արժեքների այդ դաշտի վրա մենք ունենք հրաշալի հնարավորություն կառուցելու մեր երկիրը եւ 21-րդ դարը դարձնելու Հայաստանի դար: Սա է իմ համոզմունքը: Սա է շարժման համոզմունքը: Կոչ եմ անում բոլորիդ՝ համերաշխության պայմաններում միասնական լուծել այս խնդիրը: Եվ ամենեւին կարելու չէ, թե ով կառաջնորդի այդ շարժումը:

«Ինձ ժողովուրդը չի ճանաչում, ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ: Մնացյալը գիտեն ինձ մորուքով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած, այսօրվա կերպարը դա է: Ինձ չեն հասկանում, ինձնից վախենում են: Իրենց համար արջի կերպար են ստեղծել ու իրար վախեցնում են: Մէկ-մէկ ես էլ եմ վախենում, որ չեմ հասցնի, որ ժամանակ չեմ ունենա, ցանկություն չեմ ունենա, չգիտեմ էլ ինչ չեմ ունենա ժողովրդին ասելու՝ ա՛յ ժողովուրդ, իրար հասկանանք, ճիշտ հասկանանք իրար, ես Աստված չեմ, ես զինվոր եմ, ես Հայ եմ, ես ...»: Զեն հասկանա: Դրա համար էլ չեմ ասում: Ամեն մարդ ինքն իր առաջ պիտի պատասխան տա՝ ով է ինքը:

«Մեզ անհրաժեշտ է ուժեղ եւ պրոֆեսիոնալ բանակ»

սկիզբը՝ էջ 2

«Մենք պետք է ճանաչենք մեր խնդիրների, մեր բոլոր ձախողումների եւ մեր բոլոր հաջողությունների էությունը.- շարունակել է Վարչապետը: Այս առումով ուզում եմ ընդգծել եւ նաեւ կիսել ձեզ հետ մեր մտքերի ընթացքը: Բանակն առաջին հերթին հենված է սպայի ինստիտուտի վրա: Մենք պետք է արձանագրենք մի բան, որ սպայական կոչման եւ սպայական աշխատանքի վարկը պետության անվտանգության խնդիր է: Սպան չի կարող չապահովել սեփական ընտանիքի բարեկեցությունը: Սա պետք է լինի մեր ամենակարեւոր արձանագրումը, որովհետեւ սպան պետության հենասյունն է, ընդ որում, բանակի սպան, հատուկ ծառայությունների սպան, ոստիկանության սպան: Այստեղից են, որ սկսում են մեր բոլոր պրոբլեմները, որովհետեւ մեզ թվացել է, թե մենք կարող ենք ապահովել պետության անվտանգությունը՝ սպային մղելով յուրա զնալու դաշտ եւ հարթություն:

Հայաստանի Հանրապետությունում սպայի ընտանիքը պետք է լինի բարեկեցիկ: Սա է մեր մարտավարական նպատակը, եւ այս խնդրով ենք մենք առաջնորդվելու: Բայց սպա լինելը պետք է նշանակի առանձնահատուկ որակների կրում, սպա լինելը պետք է լինի առանձնահատուկ առաքելության գիտակցում եւ պրոֆեսիոնալ, մասնագիտական առանձնահատուկ հմտությունների իմացություն: Այս իրողությունները պետք է սերտորեն կապված լինեն իրար հետ: Եվ մենք Ձիճված ուժերի բարեփոխումների համատեքստում հենց այս բանաձեւն ենք դնում: Սպայի պրոֆեսիոնալ իմացությունը, հմտությունը եւ նրա ընտանիքի բարեկեցությունը սկսած սոցիալական երաշխիքների համակարգից, բնակարանային ապահովության համակարգից, շարունակած նրանց ընտանիքի անդամների, երեխաների կրթության հնարավորություններով, որովհետեւ պետք է հասկանանք, որ մարդը ծառայում է Հայրենիքին՝ սպայի կարգավիճակում, նա սովորականից ավելի պակաս ժամանակ է տրամադրում իր ընտանիքին: Մենք պետք է առերեսվենք այս



պրոբլեմների հետ եւ այնպես անենք, որ այս իրողությունը նեգատիվ ազդեցություն չունենա ընտանիքի բարեկեցության եւ երեխաների հետագա ճակատագրի, կրթության հարցերում: Պետությունն այստեղ պետք է կանգնած լինի սպայի կողքին, կրկնում եմ միեւնույն ժամանակ, որեւէ կոմպրոմիսի չզնալով սպայի որակական հատկանիշների առումով:

Հաջորդը՝ զինվորի պրոֆեսիոնալ կարողություններն ու հմտություններն են. այստեղ նույնպես նույն չափանիշները պիտի գործեն՝ մի փոքր այլ հարթության մեջ: Մենք կարծում ենք՝ այն գործընթացը, որ սկսել ենք Ձիճված ուժերում, պիտի բերի մեր խնդիրների կատարմանը:

Ընդհանուր առմամբ պիտի արձանագրենք, որ զինվորական ծառայությունը, իհարկե, առաջին հերթին կարգապահությունն է, ինձնից սկսած՝ բոլորիս ավարտած: Մենք պետք է հարենասիրության մեր մոդելի մասին մտածենք: Մենք պետք է ի վերջո հրաժարվենք կենցաղային հայրենասիրությունից, երբ ճառերը եւ իրականությունը կիլոմետրերով շեղված են իրարից: Այսօր էլ մենք բախվում ենք այդ խնդրի հետ: Եվ սա այն ֆունդամենտալ պրոբլեմներից է, որը մենք պետք է ի վերջո կարողանանք լուծել:

Դախիճում ներկա են կին զինծառայողներ. ես ուզում եմ նախ առանձնահատուկ ընդգծել նրանց ծառայու-

թյունն ու ներկայությունը: Մենք Ձիճված ուժերում կանանց ներգրավվածության աստիճանը պետք է մեծացնենք, այդ թվում եւ առավել եւս մարտական ծառայության ոլորտում: Եվ սա Ձիճված ուժերի բարեփոխումների մեր հաջորդ կարեւոր ուղղությունն է:

Նաեւ մեր մեծագույն խնդիրներից մեկը եղել է այն, որ չենք ընկալել, որ բանակն ինքնին անվտանգության ապահովման գործում չի կարող միայնակ իրագործել այդ խնդիրը, եթե չունի շարունակություն: Այս առումով, ուզում եմ ընդգծել այն բարեփոխումները, որ նախաձեռնել ենք պահեստագործի կատարման կամ պատրաստության առումով: Մի քանի անգամ խորհրդակցություններ ունեցել ենք, եւ ես ընդգծել եմ այն մարտունակությունը, որ ունենք բանակում, զինծառայողների շրջանում, պետք է այսպես ասած, արտասպատվիրակենք, փոխանցենք պահեստագործին: Իսկ բանակում զինծառայության մեջ գտնվող սպաների եւ զինծառայողների մարտունակությունը պիտի լինի նոր որակի, որը շատ դեպքերում մեզ նույնիսկ անձանոթ է: Մենք այս խնդիրները լուծելու պարագայում է, որ կունենանք նոր իրավիճակ, եւ մենք հետևողականորեն պետք է գնանք այս ճանապարհով»:

շարունակությունը՝ էջ 5



Բանակի օրվա առթիվ

Ներկա էին ապագա սպաների ցուցադրական վարժանքին

Հունվարի 28-ին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ու նախարարի տեղակալ Արաքսիա Սվազյանն այցելել են Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց: Նախարարն ու տեղակալը ներկա են գտնվել Բանակի օրվան նվիրված դպրոցի սաների ցուցադրական վարժանքին, որի ընթացքում սովորողները ենթադրյալ դիվերսիոն գործողության չեզոքացում են կատարել:

Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարանի ուսուցիչ Սամվել Խաչատրյանի տեղեկացմամբ՝ վարժանքին մասնակցել է 3 ջուկ. «3 ջուկի միջոցով դիվերսիոն խումբը վնասագեթովեց, վերցվեց գերի, բնականաբար ունեցանք ծանապարհին վիրավոր, որին ցույց տվեցին առաջին օգնություն, վիրակապ դրեցին, նաև կարողացան խնդիրը լուծել և վերադառնալ ստորաբաժանում»:

Շնորհավորելով Բանակի օրվա կապակցությամբ նախարարը երախտագիտություն է հայտնել ՀՀ զինված ուժերի բոլոր զինծառայողներին և հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած հերոսներին. «Մենք շնորհակալ ենք այն զինծառայողներին, որոնք այսօր կանգնած են սահմանին և պաշտպանում են մեր երկրի անվտանգությունը: Մեր ամենօրյա աշխատանքով էլ հոգածությամբ պետք է ցույց տանք մեր շնորհակալությունն ու հարգանքը ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչների և նրանց ընտանիքների նկատմամբ»:

ԿԳՄՍ նախարարը շրջել է դպրոցում, ծանոթացել ընդհանուր և մասնագիտացված դասարանների ուսումնառության պայմաններին, խնդիրներին ու տեղում տվել հանձնարարականներ ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ:

Նախարարի խոսքով՝ ռազմական կրթության ասպարեզում պետությունը լուրջ անելիք ունի: Առաջին ուղղությունը «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման համընդհանուր բարելավումն է, որը պարտադիր է բոլոր դպրոցներում սովորողների համար: «10-11-րդ դասարանների սովորողների համար ներդրվել է մարզառազմական ծանրաբերի ծրագիրը, որը հանրակրթության մոտ չափորոշիչով պարտադիր է՝ որպես «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման գործնական բաղադրիչ:

րիչ: Հաջորդ ուղղությունը մասնագիտական կրթությունն է, որի բարելավման ուղղությամբ եւս ծրագրային քայլեր են իրականացվում», - ասել է Ժաննա Անդրեասյանը՝ ավելացնելով, որ այս պահին գործում է երեք մարզառազմական մասնագիտացված դպրոց, որոնցից մեկն էլ Արամ Մանուկյանի անվան հաստատությունն է:

Նախարարի տեղեկացմամբ՝ քննարկվում է սպայական դպրոցի ստեղծման ծրագիրը, որն իր բովանդակությամբ լինելու է զինվորական կրթություն իրականացնող մոտ 10 կառույց: Ռազմական կրթության կարևորությունը շեշտադրվելու է նաև բարձրագույն կրթության բարեփոխումներում Պաշտպանության նախարարության և այլ կառույցների հետ համագործակցությամբ:

Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոցը Կոտայքի մարզի Աղվերան բնակավայր է տեղափոխվել այս ուսումնական տարվանից: Նախկին դպրոցական ճամբարի տարածքում տեղակայված հաստատությունն ունի մոտ 10 մարզադահլիճի և այլ բարեկարգման աշխատանքների կարիք, թեև, ինչպես դպրոցի տնօրեն Արկադի Պետրոսյանն է նշում, մինչ տեղափոխությունը մոտ 10 մարզադահլիճներ արդեն իսկ կատարվել են: Դպրոցում ուսումնառությունը իրականացվում է 6-րդ դասարանից սկսած. այստեղ համախորհրդ երեխաներն անցնում են հանրակրթության չափորոշիչով նախատեսված բոլոր առարկաները, ինչպես նաև ստանում հավելյալ մասնագիտական կրթություն



մարզառազմական ուղղվածությամբ: Մինչ այժմ դպրոցում կրթությունը կազմակերպվել է հիմնական դպրոցի ծրագրով՝ մինչև 9-րդ դասարան: Տնօրենի խոսքով՝ իրականացվելու է նաև ավագ դպրոցի ծրագիր՝ գալիք ուսումնական տարվանից սկսած:

ԿԳՄՍ նախարարի դպրոց կատարած այցի շրջանակում քննարկվել են գույքի թարմացման, տեխնիկական համալրման և այլ հարցեր: Ներկայացնելով դպրոցի առօրյան Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարանի ուսուցիչ Գուրգեն Նազարյանը նշում է, որ օրվա առաջին հատվածում մինչև կեսօր, ուսուցանվում են հանրակրթական առարկաները. «Կեսօրից հետո ռազմամասնագիտական, մարզառազմագիտական մասնագիտացված առարկաներն են: Քանի որ երեխաները մնում են այստեղ վարժարանում՝ հաջորդիվ ըստ կարգացուցակի, իրենց կենցաղի, դասապրոցների

կազմակերպման համար է ժամանակ հատկացվում: Նրանք նաև երկու շաբաթը մեկ անգամ տուն են գնում: Բայց լինում են դեպքեր, երբ երեխաները գերադասում են մնալ դպրոցում, քան թե գնալ տուն»:

Մեզ հետ զրույցում մարզառազմական դպրոցի սաներն ասում էին, որ իրենց ապագայի ամենակարեւոր որոշումն արդեն կայացրել են. անպայման Հայոց բանակի սպա են դառնալու: «Իմ մանկության երազանքն է եղել, որ ես ընդունվեմ այս կարգի դպրոց, խորացված ուսումնասիրեմ ռազմական առարկաները և դառնամ սպա: Ես հասել եմ այդ նպատակին և հատազայում շարունակելու եմ ռազմական կրթություն», - ասում է մասնագիտացված դպրոցի 9-րդ դասարանի սան Արարատ Մաղաքյանը:

Ռազմախորհրդակցական խմբակի կամ դասընթացի դադարեցման մասին խոսք չի եղել Հանրակրթական դպրոցներում հաստատված 900-ից ավելի արտաստումնական խմբակների մեծ մասը ռազմախորհրդակցական բնույթի է: Պատասխանելով լրագրողի այն հարցին, թե մարզառազմական խմբակների գործունեությունը սահմանափակվելու վերաբերյալ խոսակցությունները որքանով են իրավացի, ԿԳՄՍ նախարարը նշել է. «Պատասխանելով լրագրողին, 900-ից ավելի արտաստումնական խմբակների ծրագրեր, որոնց զգալի մասը կրում է ռազմախորհրդակցական, զինվորական պատրաստության բնույթ: Որեւէ խոսք և որեւէ ծրագիր ռազմախորհրդակցական խմբակի կամ դասընթացի դադարեցման, կասեցման մասին ուղղակի չեն եղել», - նշել է նախարարը:

Նրա խոսքով՝ 2017 թվականին մեր երկիրը միացել է «Անվտանգ դպրոցներ» միջազգային ինիցիատիվային, որով սահմանված է գերծ մնալ դպրոցների տարածքներում զինված ստորաբաժանումների տեղակայումից, քանի որ այդ դեպքում ուսումնական հաստատությունները դառնում են թիրախ:

«Անվտանգ դպրոցներ» ծրագրի նպատակը ուսումնական հաստատությունների անվտանգությունը բարձրացնելն է», - պարզաբանել է նախարարը շեշտելով, որ տեղեկատվության միտումնավոր կեղծումն անթույլատրելի է:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



«Մեզ անհրաժեշտ է ուժեղ և պրոֆեսիոնալ բանակ»

սկիզբը՝ էջ 4

«Ուզում եմ առանձնահատուկ ընդգծել նաև աշխարհագրորի կայացումը որպես ինստիտուտ, - նշել է Վարչապետը և շարունակել: - Նաև հիմա շատ տարածված է եւ դա վատ չէ, այս օրերին մեզ օգնում են կամավորները, տարբեր կազմակերպություններ: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց դրա համար, բայց մյուս կողմից պետք է ընդգծեմ, որ երկրում չեն կարող լինել բանակներ, երկրում կարող է լինել բանակ: Եվ բոլոր նրանք, ովքեր այս կարգի ծառայություն են մատուցում, ինչի համար մենք շնորհակալ ենք, պետք է միանշանակորեն և աներկբա տեղավորվեն հրամանատարական ուղղահայացի մեջ, և այդտեղ որեւէ այլընտրանք եւ որեւէ կոմպրոմիս չի կարող, ուզում եմ, որ մենք շատ հստակ գիտակցենք»:

Բանակը նաև գործում է՝ ըստ այն հնարավորությունների, որը ստեղծում է տնտեսությունը: Եվ այստեղ էլ ուզում եմ կապը տեսնենք, որովհետև մենք բանակում բարեփոխումներ, սպառազինության ձեռքբերումներ իրականացնում ենք այնքանով, ինչքանով դրա հնարավորությունը տալիս է

պետական բյուջեն: Իսկ պետական բյուջեն գեներացվում է տնտեսվարողների գործունեության և նրանց կողմից վճարվող հարկերի հաշվին:

2023 թվականին մենք 2018 թվականի համեմատությամբ 113 տոկոսով ավելացրել ենք պաշտպանական ծախսերը: Այդ ծախսերի մի մասը գնալու է զինծառայողների սոցիալական ապահովությանը, աշխատավարձերի բարձրացմանը, մյուս մասը՝ սպառազինության և տեխնիկայի ձեռքբերումներին, մյուս մասը՝ ինժեներական աշխատանքներին և այլն: Եվ ես ուզում եմ նաև այս դահլիճում շնորհակալություն հայտնել բոլոր այն մարդկանց, ովքեր տնտեսական գործունեություն են ծավալում և օրենքով սահմանված կարգով հարկեր են վճարում պետությանը: Ընդհանրապես և այդ թվում անվտանգության ոլորտում, շատ կարևոր է, որ կարողանանք փոխել հարկ վճարելու ընկալումը մարդկանց կողմից, որովհետև դարձյալ կրկնում եմ սխալ է այն ընկալումը, թե պետությունը մարդկանցից վերցնում է այդ գումարը հարկի տեսքով: Ոչ, երբ մարդը, քաղաքացին հարկ է վճարում, նա իր աջ գրպանից գումարը տեղափոխում է ձախ գրպան, կամ

հակառակը, որովհետև վճարված հարկերի հաշվին է ապահովվում երկրի անվտանգությունը, կառուցվում ճանապարհներ, դպրոցներ և այլն: Ոչ ոք ինքն իր համար ճանապարհ չի կառուցելու, ոչ ոք ինքն իր համար անվտանգություն չի ապահովելու, ոչ ոք ինքն իր համար իրավակարգ չի ապահովելու, և այս առումով, շատ կարևոր է այս հարաբերությունների ճիշտ կառուցումն առաջին հերթին գաղափարական հարթության վրա:

Մեզ անհրաժեշտ է ուժեղ և պրոֆեսիոնալ բանակ՝ ուժեղ հոգով, ուժեղ իմացությամբ, ուժեղ ինտելեկտով, ուժեղ բազկով, ուժեղ ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող: Սակայն դարձյալ ուզում եմ կրկնել, որ բանակը մեզ անհրաժեշտ է ոչ թե պատերազմի, այլ խաղաղության համար, որովհետև Ձիմկած ուժերի բարեփոխումներն առաջին հերթին մեզ համար կարևոր են կառավարության որդեգրած խաղաղության օրակարգն առաջ մղելու համար: Մենք չպետք է շեղվենք այդ օրակարգից և հետևողականորեն առաջ մղենք խաղաղության օրակարգը:

Եվ ի վերջո ուզում եմ մեր բոլոր սպաներին, զեներալներին, զինվորներին, շարքա-

յիններին, քաղաքացիական ծառայողներին, ովքեր ազնիվ և անձնվեր ծառայություն են մատուցում Հայրենիքին, շնորհակալություն հայտնել այդ առիթով: Մենք շատ դժվար ճանապարհ ենք անցնում, և ինչպես կանցնենք այդ ճանապարհը կախված է մեզնից, բացառապես մեզնից և մեր կամքից, մեր հավատից, մեր նվիրումից, մեր ազնվությունից:

Բոլորիս հաջողություն եմ մաղթում և կրկին շնորհակալություն հայտնում բոլոր այն մարդկանց, ովքեր ծառայում են ոչ միայն և ոչ այնքան գործի, աշխատանքի բերումով, այլ նաև հոգու, սրտի, հավատի և առաքելության գիտակցությամբ:

Շնորհակալ եմ բոլորից և շնորհավորում եմ բոլորին՝ Հայկական բանակի 31-րդ տարեդարձի առիթով»:

Հավաք-խորհրդակցության ընթացքում ներկայացվել են 2022 թվականի ուսումնական տարվա արդյունքներով լավագույն ճանաչված զորամասերն ու ստորաբաժանումները: Առաջիկայում տեղի կունենան վերջիններիս պատվո դրոշմների փոխանցման արարողությունները: Միջոցառումն ավարտվել է ՀՀ Զինված ուժերի օրհներգի կատարմամբ:

Կառավարության նիստում

«Թումո» կենտրոնները եւ «Թումո տուփերը» հասանելի կլինեն Հայաստանի ողջ տարածքում

Կառավարության այսօրվա նիստում անդրադարձ է եղել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի իրականացրած «Թումո տուփի մեջ» կրթական ծրագրին:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է ծրագրի մանրամասները եւ առաջիկա անելիքները: «Այս ծրագիրը մեկ այլ շատ կարեւոր եւ խոշոր նախագծի հատված է, որով փորձում ենք որակյալ կրթական ծառայությունները ներառյալ ոչ ֆորմալ կրթությունը, ինչպիսին իրականացնում է «Թումոն», դարձնել հասանելի Հայաստանի բոլոր բնակավայրերում»,- ասել է ԿԳՄՍ նախարարը:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ նախատեսվում են 16 խոշոր կենտրոններ, որոնցում հնարավոր է սովորել «Թումոյի» ամբողջական կրթական ծրագրով եւ 110 շարժական «Թումո տուփեր», որոնք հիմնականում տեղադրվում են դպրոցների հարեւանությամբ:

«Թումո տուփերի» միջոցով երեխաներն անցնում են ուսումնառության առաջին հատվածը, որն առավել հիմնված է ինքնուսուցման վրա: Այնուհետ 2-րդ փուլի ուսուցումը հնարավոր է շարունակել խոշոր կենտրոնում՝ օգտվելով տրանսպարտային ծառայությունից:

«Այս մոդելով է աշխատում Դիլիջանի կենտրոնը: Գավառում եւ Բերդում «Թումո տուփի» առաջին փուլի ուսումնառությունից հետո երեխաները կրթությունը խորացնում են Դիլիջանի խոշոր կենտրոնում: 16 կենտրոնները եւ 110 տուփերը ծածկելու են Հայաստանի ամբողջ աշխարհագրությունը՝ հասանելի դարձնելով կրթական ծրագիրը բոլոր բնակավայրերում»,- ասել է նախարար Ժաննա Անդրեասյանը եւ հավելել, որ այս պահին ընթացքի մեջ են նաեւ մի շարք տուփերի տեղադրման եւ Կապանում, Էջմիածնում ու Կողբում խոշոր կենտրոնների կառուցման աշխատանքները:

Նախարարի գնահատմամբ՝ կարելու հանգամանք է «Թումո տուփի»՝ դպրոցների հարեւանությամբ տեղադրումը, ինչը հնարավորություն է դպրոցների զարգացման, իսկ երեխաների եւ ուսուցիչների համար նոր հնարավորությունների ձեռքբերման ու վերապատրաստման տեսանկյունից:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ներկայացմամբ՝ «Թումո» ծրագրի ընդլայնման նպատակով անհատույց օգտագործման իրավունքով տարածք է հատկացվել:



ԿԳՄՍ նախարարի տեղեկացմամբ՝ նախագծի հաստատումը հնարավորություն է տալիս, որ 900 երեխաներ Ախուրյանում եւ 300-ը՝ Փանիկում, կարողանան օգտվել ծրագրից:

«Թումո» ծրագիրն ունի 14 ուղղություն, այդ թվում՝ ֆիլմերի ստեղծում, անիմացիա, երաժշտություն եւ այլն:

Ըստ նախարար Ժաննա Անդրեասյանի՝ հատկանշական է, որ կենտրոնները բացվում են պատմաշակութային արժեք ունեցող շենքերում, ինչը նշակութային ժառանգությանը նոր շունչ է հաղորդում եւ նոր միջավայր ստեղծում: Գյումրիում կենտրոնը կառուցվել է թատրոնի պատմական շենքում, իսկ Կապանում նախատեսվում է հիմ կայարանի շենքում: 7 «Թումո» կենտրոն գործում է նաեւ արտերկրում: Կենտրոնների ստեղծմամբ հետաքրքրված են նաեւ ճապոնիայում եւ Մեքսիկայում. «Թումո» կենտրոնները դառնում են նաեւ արտահանվող կրթական ծառայություն:

Բարեփոխումների ծիրում

Դասախոսություն՝ ըստ օրախնդիր թեմաների

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հյուրընկալվել է «Գեո» մեդիա գործարանում: Նախարարը հանդես է եկել դասախոսությամբ՝ կրթության ոլորտի բարեփոխումների թեմայով, պատասխանել ապագա հետաքննող լրագրողների հարցերին:

Ներկայացնելով կրթության ոլորտում կատարվող համակարգային փոփոխությունները՝ նախարարը մանրամասնել է ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման ուղղությամբ իրականացվող պետական համալիր ծրագրերը: Նրա խոսքով՝ առաջինը ուսուցիչների վարձատրությունը բարձրացնելու համալիր ծրագրերն են, որոնք փոխկապակցված են մասնագիտական զարգացման հետ: Այդ ծրագրերից մեկը կամավոր ատեստավորման համակարգն է, որի հիմքում առարկայական գիտելիքի իմացությունն է, մյուսը՝ տարակարգի մեխանիզմն է, որն հիմնված է ուսուցչի մանկավարժական հմտությունների վրա: «Այս երկու ծրագրերն էլ ենթադրում են հավելվածի տրամադրում եւ նպատակ ունեն խթանել ուսուցչի մասնագիտական աճը:

Մենք ունենք առանձնահատուկ դեպքեր, երբ համընդհանուր բարելավումների ազդեցությունը նկատելի չէ: Խոսքը գյուղական փոքր միջնադպրոցներում է, որտեղ դասավանդող ժամաքանակները քիչ են: Նման դպրոցները կազմում են ընդհանուր դպրոցների մոտ 30 տոկոսը: Այս դպրոցներում բոլոր ուսուցիչներն այս տարվանից սկսած հավելվածի են ստանալու: Նույն մոտեցումը կիրառվում է նաեւ բնագիտական առարկաների ուսուցիչների համար, քանի որ հատկապես այս ուղղությամբ մենք ունենք ուսուցիչների պակաս:

Երկրորդ պետք է աշխատանք տարվի մանկավարժ դառնալու մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Դրանով պետք է զբաղվեն դպրոցների մասնագիտական կողմնորոշման ակումբները, որոնք, ըստ հանրակրթության պետական նոր չափորոշի, պարտադիր են եւ գործելու են բոլոր դպրոցներում: Բնականաբար,



մենք հատուկ ուշադրություն ենք դարձնելու, որ ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը մեծանա եւ այդ նպատակով նախատեսում ենք բուհական կրթաթրջակների տրամադրում, որով բարձրագույն կրթության ամբողջական ծախսի հատուցում կապահովվի: Ներդրել ենք նաեւ կրկնակի մասնագիտացումների շնորհման համակարգ, որով նույն մասնագետին երկու առարկայի դասավանդման որակավորում է շնորհվելու, օրինակ՝ կենսաբանության եւ քիմիայի կամ ֆիզիկայի եւ ինֆորմատիկայի ուսուցիչ: Ընդհանրապես այս տարվանից այս համակարգով ընդունելություն է արվելու:

Հաջորդ քայլը ուսուցչի աշխատանքի կառուցվածքի փոփոխությունն է: Ներկայում մեկ դրույթ ծանրաբեռնվածությունը չաբաթական 22 դասաժամ է կազմում, ինչը մեծ բեռնվածություն է: Ստացվում է, որ ուսուցիչն անընդհատ պետք է դասարան մտնի, իսկ օրինակ՝ գնահատման, հավելյալ այլ աշխատանքի համար ժամանակ չի ունենում: Նոր չափորոշչով ուսուցչի ծանրաբեռնվածությունը նվազեցվում է՝ դրույթաչափը կրտսեր դպրոցում սահմանվում է շաբաթական 18, իսկ միջին եւ ավագ դասարաններում՝ 20 դասաժամ:

Հաջորդ ուղղությունը մասնագիտական զարգացման քաղաքականության փոփոխությունն է: Մինչ այժմ գործող պարտադիր ատեստավորման համակարգն ընդհանուր էր բոլորի համար: Բոլոր ուսուցիչները

անցնում էին նույն վերապատրաստումները՝ անկախ իրենց կարիքից, փորձառությունից, ունեցած հմտությունից: Մենք անգամ ունեցել ենք դեպք, երբ նույն ուսուցիչը, որը եղել է սովյալ ծրագրով վերապատրաստող, հետագայում ինքն է անցել նույն վերապատրաստման դասընթացը, քանի որ դա օրենքի պահանջ էր: Այս համակարգը եւս ամբողջությամբ վերանայվել է: Ուսուցչի ատեստավորումն ու վերապատրաստումը, որի համար պետությունն ամեն տարի գումարներ է հատկացնում, պետք է հիմնված լինի ուսուցչի մասնագիտական կարիքի վրա»,- Գեյ է նախարար Ժաննա Անդրեասյանը եւ հավելել, որ մասնագիտական կարիքի բացահայտումն արվելու է գնահատման միջոցով:

Նա նաեւ Գեյ է, որ մասնագիտական զարգացման առաջնային ուղղություն է դիտվում ներառական կրթության հմտությունների ապահովումը: Այդ նպատակով փոփոխվել են ֆինանսավորման սկզբունքները, ներդրվել է ուսուցչի օգնականի ինստիտուտը, որի արդյունավետության բարձրացումն օրակարգային հարցերից է:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ բուհերի ակադեմիական ազատությունների, բուհական

կրթական ծրագրերի եւ դասագրքերի, ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերությունների վերաբերյալ հարցերին:

Պատասխանելով ուսանողների հարցերին՝ նախարարն անկաշկանդ ու բաց ներկայացրել է կրթական ոլորտի տարիներով կուտակված խնդիրները, դրանց լուծման ռազմավարական ուղղություններն ու կոնկրետ քայլերը:

Նախարարը խոսել է դպրոցներում եւ բուհերում կրթական մակարդակի բարձրացման, դասագրքերի բովանդակային թերությունների, վիճակագրական տվյալների հասանելիության, մասնագետների ավելացման եւ մանկավարժների վերապատրաստման մասին:

Ժաննա Անդրեասյանը Գեյ է նաեւ, որ կարելու է ոչ ֆորմալ կրթությունը եւ մեծ սպասումներ ունի լրագրողներից՝ ոլորտային խնդիրների բարձրաձայնման եւ հատկապես՝ իրավական ընդհանուր կարգավորումների տիրույթից դուրս գտնվող հարցերը բարձրաձայնելու առումով: «Կարծում եմ՝ լրագրողները լուրջ անելիք ունեն խնդիրների բարձրաձայնման եւ դրանց հնարավոր լուծումներ գտնելու գործում»,- ասել է նա:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



Աշխարհի հետ

Նախարարը դեսպանին ներկայացրել է Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամը

Նախարար Ժաննա Անդրեասյանը ընդունել է ԳԳ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան ԱՆՆ Լույոյին:

Հանդիպմանը ներկա են եղել նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Հայաստանում ֆրանսիական համալսարանի ղեկավար Սալվա Նակկոզին:

Դեսպան ԱՆՆ Լույոն շնորհավորել է Ժաննա Անդրեասյանին՝ նախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ ԿԳՄՍ ոլորտներում երկու երկրների միջև արդյունավետ համագործակցությունը կլինի շարունակական:

Ուղջունելով դեսպանին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ հանդիպումը լավ առիթ է երկու երկրների միջև առկա համագործակցության լայն շրջանակում մատնանշելու ընթացիկ տարվա անելիքները: Ըստ նախարարի՝ մի շարք համատեղ ծրագրերի ուղղությամբ առկա է բավական մեծ առաջընթաց, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է Հայաստանում ֆրանսերեն լեզվի օգնականների ծրագրին, որը լրամշակվել է ԿԳՄՍ նախարարության կողմից: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ ներկայումս նախագիծը շրջանառվում է, և կարծիքներն ամփոփելուց հետո ԿԳՄՍ նախարարությունը պատրաստ կլինի ստորագրելու ծրագրի իրականացման վերաբերյալ գործընկերության համաձայնագիրը:

Նախարարի խոսքով՝ բավականին մեծ առաջընթաց կա նաև ԳԳ հանրակրթական դպրոցներում ֆրանսերենի խորացված ուսուցման և լրացուցիչ ֆրանկոֆոն ծրագրի իրականացման ուղղությամբ: Համագործակցության նպատակն է ԳԳ ավագ դպրոցներում խթանել ֆրանսերեն լեզվի և գրականության խորացված ուսուցումը ու



ֆրանկոֆոն լրացուցիչ ծրագրի ներդրումն ու իրականացումը՝ ի հավելումն հանրակրթական հիմնական ծրագրի: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ ծրագրի շրջանակում հստակեցված են բոլոր հիմնական սկզբունքները. ակնկալվում է, որ առաջիկայում կհստակեցվի նաև նոր դպրոցի կամ դպրոցների ցանկը՝ նշյալ ծրագրում ներառելու համար:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործունեությանը: Ժաննա Անդրեասյանը բարձր է գնահատել բուհի գործունեությունը՝ ուրախությամբ փաստելով, որ ուսանողների թիվը տարեցտարի աճում է: Նախարարը ներկաներին տեղեկացրել է բարձրագույն կրթության ոլորտում ներկայումս ընթացող բարեփոխումները՝ շեշտելով, որ առաջիկայում կքննարկվեն այդ ուղղությամբ գործունեություն ծավալող աշխատանքային խմբերի իրականացումը աշխատանքները: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ այն լավ առիթ է՝ քննարկելու նաև Ֆրանսիական համալսարանի գործունեության և միջա-

վարի բարելավմանն ուղղված հարցերը:

Բուհի ղեկավար Սալվա Նակկոզին իր հերթին փաստել է, որ բուհի ամենամեծ հաջողությունն այն է, որ համալսարանի շրջանավարտները մնում են աշխատելու հայրենիքում և խիստ պահանջված են ԳԳ աշխատաշուկայում:

Դեսպան ԱՆՆ Լույոն ներկայացրել է Հայաստանում ֆրանսերենի ուսուցիչների վերապատրաստման նոր համատեղ ծրագրի մանրամասները, որի շրջանակում, ըստ դեսպանի, անհրաժեշտ է նախեսառաջ իրականացնել տվյալների քարտեզագրումը: Նախարարը կարեւորել է ուսուցիչների կարողությունների շարունակական զարգացումը՝ այդ թվում՝ որպես օրինակ բերելով կամավոր ստեստավորման գործընթացի արդյունքները:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև Ֆրանկոֆոն ծրագրային նախաձեռնություններին, մասնավորապես՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակում ԿԳՄՍ նախարարության համակարգման ոլորտներում իրականացվող

ծրագրերի ընդլայնման և համագործակցության խորացման հարցերին: Այդ համատեքստում կարելի է ԳԳ-ում ֆրանկոֆոն դեսպանների հետ հանդիպում անցկացնելու հնարավորության հարցը:

Հանդիպմանը նախարար Ժաննա Անդրեասյանը դեսպանի ուշադրությունն է հրավիրել 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից շրջափակված Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության և ամբողջ աշխարհի հետ կապող միակ ճանապարհի խնդրին՝ վերստին շեշտելով հումանիտար ճգնաժամի անդառնալի հետևանքները: Նախարարը շնորհակալություն է հայտնել Ֆրանսիայի կառավարությանը այս դժվարին շրջանում շարունակական աջակցության համար՝ ամենատարբեր մակարդակով և ձևաչափերով. «Այդ աջակցությունն անգնահատելի է մեզ համար, և հուսանք, որ համատեղ ջանքերը կբերեն Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամի արագ հանգուցալուծմանը: Կարծում են, որ ես արտահայտում եմ ԳԳ յուրաքանչյուր քաղաքացու շնորհակալությունը և Կառավարությանը՝ շարունակական աջակցության համար»:

Դեսպան ԱՆՆ Լույոն իր հերթին նշել է, որ Ֆրանսիան մեծ ներդրավածություն է և հանձնառություն ունի՝ շարունակելու իր աջակցությունը ստեղծված հումանիտար ճգնաժամի հանգուցալուծման գործում. «Ֆրանսիայի ժողովրդի և Կառավարության անունից փոխանցում են համերաշխության և աջակցության մեր ուղերձը»:

Հանդիպմանը քննարկվել են նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հ. ՅՈՒՐԱՆՆԻՍԱՆ

Հանրային քննարկումներ

Ծրագրերի և խմբակների երաշխավորման կարգի նախագծի շուրջ

ԳԳ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների երաշխավորման կարգի նախագիծը:

Ուսումնական առարկաների ծրագրերը մշակվում են՝ հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչի պահանջներին համապատասխան, ԳԳ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ուսհաստատությունների կողմից: Մշակված ծրագրերը նախարարության կողմից հաստատվում և երաշխավորվում են գործածության: Երաշխավորված ծրագրերին ուսհաստատության ուսումնական պլանում ժամեր տրամադրվում են անհատական (ընտրովի) բաղադրիչով սահմանված ժամաքանակից: Խմբակների անհրաժեշտությունը որոշվում է սովորողների առաջարկությամբ, հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված առաջնահերթություններով և դպրոցի զարգացման նպատակով: Խմբակը կարող է վարել ուսուցիչը կամ համապատասխան որակա-

վորում ունեցող մասնագետը:

Խմբակը ստեղծվում է սովորողների՝ արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպման, նախասիրությունների, հետաքրքրության տարբեր ոլորտների վերաբերյալ ուսումնական ծրագրերի իրականացման, սոցիալականացման և ինքնուրույն կենսագործունեության համար, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համար:

Հաստատությունում խմբակները ձևավորվում են՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով, ուսուցչի կամ ծնողների առաջարկությամբ, մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ հաստատության տնօրենի հրամանով՝ պահպանելով կարգի սահմանված պահանջները:

Խմբակի ծրագիրը պետք է ներկայացվի ԿԶՆԱԿ՝ մասնագիտական փորձաքննության նպատակով: Փորձագիտական դրական եզրակացության դեպքում ԿԶՆԱԿ-ը խմբակի ծրագիրը ներկայացնում է նախարարություն՝ գործածության երաշխավորելու համար:

Նախարարության կողմից խմբակների հաստատված ծրագրերը այլ հաստատությունները կարող են օգտագործել առանց լրացուցիչ հաստատման: Կրթական որևէ աստիճանում առանձին խմբակին հատկացվող ժամաքանակը չի կարող գերազանցել շաբաթական 2 ժամը: Նույն խմբակը կարող է իրականացվել կրթական տար-

բեր աստիճաններում: Յուրաքանչյուր կրթական աստիճանում գործող խմբակի ծրագիրը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Խմբակի ծրագրի անվանումը չի կարող կրկնել ուսումնական պլանով նախատեսված հանրակրթական պետական ծրագրի որևէ ուսումնական առարկայի անվանումը և ծրագրի բովանդակությունը:

Խմբակը տարիֆիկացվում է, եթե դրա ծրագիրը երաշխավորվել է կարգի պահանջներին համապատասխան և առնվազն 8 սովորող խմբակում ընդգրկվելու ցանկություն է հայտնել: Սովորողները կարող են մասնակցել խմբակի աշխատանքներին՝ իրենց ցանկությամբ, ինչպես նաև առանց հիմնավորման հրաժարվել՝ բացի նախարարի հրամանով սահմանված խմբակներից: Հաստատության ընտրությամբ խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքները գնահատվում են ձևավորող գնահատման մեթոդներով:

Ուսումնական նախագծերն իրականացվում են 7-12-րդ դասարաններում: Նախագիծն առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որևէ առարկայի կամ ուսումնասիրվող որևէ օբյեկտի կամ երեւույթի վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանք է՝

նվիրված օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտմանը, արդյունքների ստացման և եզրակացությունների արձանագրմանը: Սովորողի կողմից նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից: Նախագծի թեման կարող է լինել առարկայի շրջանակում հետազոտություն, մշակութային, ազգագրական միջոցառում, որոշակի տարածքի (տարածաշրջան, համայնք, բնակավայր) խնդիրներին նվիրված աշխատանք:

Հաստատությունն ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչից նախագծի իրականացման համար տրամադրում է համապատասխան ժամաքանակ, որը տարիֆիկացվում է: Միջառարկայական նախագծի դեպքում տարիֆիկացվում են մասնակցող բոլոր առարկաների ուսուցիչներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տեւողությանը համապատասխան:

Սովորողներն ընտրում են այն նախագիծը, որին ցանկանում են մասնակցել, ինչպես նաև հրաժարվել՝ առանց հիմնավորման: Հաստատության սովորողների կողմից իրականացված ավարտուն նախագծերը գնահատվում են և հրապարակվում հաստատության կայքում:

Հեղինակ՝ ՅՈՒՐԱՆՆԻՍԱՆ

Գիտություն

Դիտարկվել են համագործակցության արդյունավետ եղանակներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր ընդունել է «Գիտուժ» նախաձեռնության ներկայացուցիչներին:

Հանդիպմանը ներկա են եղել նաև ԿԳՄՍ կրթության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանը և Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանը:

«Գիտուժ» նախաձեռնության անդամները ներկայացրել են իրենց գործունեությունը և նպատակները: Քննարկվել են գիտության ոլորտում պետական պատվերի համակարգի ներդրումը, Հայաստանում գիտության շաբաթ անցկացնելու ուղղությամբ համագործակցության հեռանկարները:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին և կարևորել համագործակցության հնարավոր եղանակների քննարկումը: «Դուք մեր կարևոր գործընկերներն եք ոչ միայն որպես մասնագետներ, այլև որպես ընթացիկ բարեփոխումների կրողներ, նպատակներն ու ակնկալվող արդյունքները գնահատող ներկայացուցիչներ: Մեզ համար էական է լսել ձեր առաջարկները և համատեղ կատարել պետական քաղաքականությունը լրացնող եզրահանգումները»:

Գիտության ոլորտում պետական պատ-



վերի համակարգ գերդնելու գաղափարի վերաբերյալ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ այժմ աշխատանքներ են իրականացվում «Բարձրագույն կրթության և գիտության օրենքի» նախագծի լրանշակման ուղղությամբ: «Եթե ունեք պետական պատվերի ձևավորման արմատական առաջարկներ, որոնք կարող են օրենքում ձևակերպվել՝ իբրև դրույթներ՝ կարգավորելու գիտության ոլորտում ֆինանսավորման քաղաքականության պետական պատվերի սկզ-

բունքները, խնդրում են հիմնավորումներով գրավոր ներկայացրել առաջարկներ», - ասել է նախարարը:

Հանդիպմանը քննարկվել է Հայաստանում գիտության շաբաթ անցկացնելու հնարավորությունը՝ այդ կերպ հետաքրքրությունը գիտության նկատմամբ մեծացնելու և հանրայնացնելու նպատակով: Անդրադարձ է եղել արդեն 3-րդ տարին անցկացվող դպրոցական գիտության փառատոնին:

«Մեզ համար առաջնահերթ է գիտության

նկատմամբ հետաքրքրության զարգացումը՝ սկսած դպրոցից: Որպես գիտության շաբաթվա միջոցառումների բաղադրիչ՝ «Գիտուժ» կարող է ակտիվորեն ներգրավվել այս փառատոնին, քանի որ դպրոցներն ունեն գիտական աջակցության կարիք՝ նախագծերի պատրաստման, ուղղորդման և խորհրդատվության տեսքով: Դա նաև կնպաստի դպրոցների մասնակցության ակտիվացմանը», - ասել է նախարարը: Անդրադառնալով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ստեղծելու նախագծին՝ նախարարը նշել է, որ այն մշակման փուլում է: Նպատակ է ստեղծել ինստիտուցիոնալ հենք՝ ապահովելու բարձրագույն կրթության բարեփոխումների ընթացքը, որը միտված է բարձրագույն կրթության և գիտության համակարգերի ինտեգրմանը, բարձրագույն կրթության և գիտության ոլորտում միասնական քաղաքականության իրականացմանը, բարձրագույն ուսումնական հաստատություններում հետազոտական բաղադրիչի ընդլայնմանը, բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրմանը: Նախագիծը կշրջանառվի և կներկայացվի հանրային քննարկման:

Հանդիպման ընթացքում նդրադարձ է եղել պետական քաղաքականության բարելավմանը վերաբերող մի շարք այլ հարցերի:

Հանրային քննարկումներ

Կամավոր ատեստավորմամբ՝ հավելավճար ստանալու հնարավորություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և ատեստավորման արդյունքում ՀՀ պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգի նախագիծը:

Ներդրված կամավոր ատեստավորման համակարգի փորձնական ծրագիրը շարունակաբար կխրատվի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացումը և լրավճարի տրամադրման միջոցով կնպաստի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կխթանի արական սեռի մանկավարժների մուտքն արտադպրոցական ուսումնական հաստատություններ:

Նախագծով սահմանվել է.

- 2023 թվականից սկսած՝ ատեստավորմանը կմասնակցեն պետական և համայնքային մարզադպրոցներում ուսումնամարզական գործընթաց իրականացնող ազատ ոճի և հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ձյուդո մարզաձևերի, ինչպես նաև արվեստի և երաժշտական դպրոցների դաշնամուրի և երաժշտության տեսություն (սոլֆեջո և երաժշտական գրականություն) դասավանդող մանկավարժական աշխատողները:

- 2024 թվականից սկսած՝ ատեստավորմանը կմասնակցեն նաև պետական և համայնքային մանկապատանական ստեղծագործական և զեղագիտական կենտրոններում, մշակույթի տներում դասավանդող մանկավարժական աշխատողները:

- 2023 թվականից սկսած՝ ատեստավորմանը կարող է մասնակցել նաև որեւէ հաստատությունում չաշխատող և մանկավարժական աշխատողի պահանջները բավարարող անձը, որը լրավճար կարող է ստանալ որեւէ հաստատությունում աշխատանքի ընդունվելու օրվանից:

Համաձայն նախագծի՝ ատեստավորումն անցկացվում է յուրաքանչյուր տարի՝ առնվազն մեկ անգամ: Մանկավարժական աշխատողի ատեստավորման գործընթացի ժամանակացույցը, ըստ ուղղության և քննական կենտրոնների, հաստատվում է ԿԳՄՍ նախարարի հրամանով և հրապարակվում նախարարության և Գնահատման և թեստավորման կենտրոնի կայքերում՝ ժամանակացույցով

հաստատված առաջին ատեստավորումից առնվազն 20 աշխատանքային օր առաջ: Ատեստավորումն անցած մանկավարժական աշխատողներին լրավճար տրվում է 5 տարի ժամկետով, որը հաշվարկվում է ատեստավորումից սկսված:

Ատեստավորմանը մասնակցելու համար հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակվում է նախարարության և ԳԹԿ-ի կայքերում: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ներկայացվում են այն ուղղությունների ցանկը, որոնցով դասավանդող մանկավարժական աշխատողները կարող են հայտ ներկայացնել, ինչպես նաև տվյալ ուղղության ատեստավորմանը հատկացվող ժամանակահատվածը:

Մանկավարժական աշխատողները հայտերը կարող են ներկայացնել յուրաքանչյուր տարվա մարտի 15-ից մինչև առաջին ատեստավորմանը նախորդող 20-րդ օրը: Հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքում՝ կցելով սահմանված փաստաթղթերն ու տեղեկատվությունը: Անկախ դասավանդած ուղղությունների քանակից՝ մանկավարժական աշխատողը տվյալ տարում կարող է ատեստավորման հայտ ներկայացնել միայն մեկ ուղղությամբ՝ իր ընտրությամբ:

Տվյալ ուղղությամբ ոլորտային մասնագետները կազմված հանձնաժողովը ձևավորվում է ԳԹԿ տնօրենի հրամանով: Թեստերը, մեթոդական ուղեցույցները, առաջադրանքներում ընդգրկվող նյութը և առաջադրանքների մոնիթորինգը, ըստ ուղղությունների, մշակվում են ԳԹԿ-ում՝ տվյալ ուղղությամբ ոլորտային և առնվազն 7 տարվա գիտամանկավարժական գործունեության փորձ ունեցող մասնագետներից կազմված հանձնաժողովի կողմից՝ տվյալ որակավորմամբ մասնագիտական կրթություն տրամադրող բուհում և տրամադրվում ԳԹԿ-ին:

ԳԹԿ-ն յուրաքանչյուր ատեստավորումից առնվազն 20 աշխատանքային օր առաջ հրապարակում է մեթոդական ուղեցույց, որում ներկայացվում են թեստերի կառուցվածքը, առաջադրանքներում ընդգրկվող նյութը, ձևաթղթի լրացման կարգը և առաջադրանքների մոնիթորինգը: Հայտ ներկայացրած մանկավարժական աշխատողների ցուցակների հիման վրա ԳԹԿ-ն Երեւան քաղաքում և մարզկենտրոններում ընտրում է ատեստավորման կենտրոններ, որ-

տեղ գործընթացը կազմակերպում են կենտրոնի ղեկավարը և ներկայացուցիչները:

Ատեստավորումն անցկացվում է գրավոր թեստերի միջոցով: Թեստերը բաղկացած են ընտրովի կամ կարճ պատասխաններ պահանջող առաջադրանքներից:

Պատասխանների ձևաթղթերը ստուգվում են ԳԹԿ-ում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով: Ատեստավորման արդյունքները հրապարակվում են ատեստավորման օրվանից հետո ինքզրույթ օրը՝ ԳԹԿ-ի կայքում: Ատեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում մանկավարժական աշխատողն արդյունքների հրապարակմանը հաջորդող օրը՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, կարող է ատեստավորման արդյունքների բողոքարկման դիմումը էլեկտրոնային եղանակով ուղարկել մասնագիտացված բուհի մասնագիտական հանձնաժողովին: Բողոքարկման արդյունքում ընդունվում է որոշում՝ գրավոր աշխատանքի միավորի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին:

Լրավճար տրվում է միայն հաստատությունում աշխատող մանկավարժական աշխատողին: Մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխման արդյունքում լրավճարը պահպանվում է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադպրոցական ուսումնական հաստատություններում դրույքաչափերը խիստ տարբեր են ըստ տարբեր համայնքների կախված համայնքների բյուջեներից, սահմանվում է ամրագրված լրավճար հետևյալ տրամաբանությամբ.

1) Ատեստավորման 90-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 138.300 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար:

2) Ատեստավորման 80-89 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 111.500 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար:

3) Ատեստավորման 70-79 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 80.600 դրամ լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար:

Լրավճարները ներառում են հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

Վերոնշյալ արդյունքների դեպքում մանկավարժական աշխատողը կարող է իր նա-

խաձեռնությամբ երկրորդ անգամ դիմել և մասնակցել ատեստավորման գործընթացին՝

1) նախորդ արդյունքին հավասար արդյունք ցուցաբերելու դեպքում մանկավարժական աշխատողի լրավճարի չափը պահպանվում է, որի համար սահմանվում է հնգամյա նոր ժամկետ,

2) 70-79 և 80-89 տոկոս արդյունք ցուցաբերած արդյունքի համեմատ ավելի բարձր արդյունք ցուցաբերելու դեպքում մանկավարժական աշխատողը լրավճար է ստանում վերջին արդյունքի հիման վրա, որի համար սահմանվում է լրավճար ստանալու հնգամյա նոր ժամկետ,

3) նախորդ արդյունքի համեմատ ավելի ցածր արդյունք ցուցաբերելու դեպքում լրավճարը պահպանվում է արդեն սահմանված ժամկետով:

Ատեստավորում անցած մանկավարժական աշխատողն այլ հաստատությունում ատեստավորում անցած ուղղությամբ համատեղությամբ աշխատելու դեպքում հավելավճար ստանում է և՛ հիմնական, և՛ համատեղությամբ աշխատավայրից, իսկ ատեստավորում անցած ուղղությունից տարբերվող ուղղությամբ համատեղությամբ աշխատելու դեպքում՝ միայն հիմնական աշխատավայրից:

Միաժամանակ, հանրային քննարկման ներկայացված՝ ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի թիվ 201-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին որոշման նախագծով առաջարկվում է արտադպրոցական ուսուցաստատություններում աշխատաժամանակի տեւողությունը սահմանել շաբաթական 20 ժամ՝ մանկավարժական աշխատանքի 1 դրույքաչափի համար՝ բացառությամբ մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների, որոնց դրույքաչափի հաշվարկման և վճարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 16-ի թիվ 798-Ն որոշմամբ: Նախագծի ընդունման արդյունքում համապատասխան կարգի գործարկմամբ արտադպրոցական ուսուցաստատության մանկավարժական աշխատողների շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 1 դրույքաչափի համար (անկախ կազմակերպարական կարգավիճակից) կլինի միասնական և կունենա պետության կողմից կազմակերպական ու ֆինանսական հստակ հիմքեր:

Հեղինակ՝ ՅՈՒՆԱՆՆԻՍՅԱՆ

Սիրո մե՛ր հովանավորը. Սուրբ Սարգիս զորավար Սուրբ Սարգիս տոնը այս տարի կնշվի փետրվարի 4-ին

Սուրբ Սարգիս զորավարը իր որդու՝ **Սարտիրոսի** եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է՝ հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերագանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեծքանդակներ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Սարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը գերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգիսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է Սուրբ Սարգիսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Ձորականների շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Ձորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո Սուրբ Սարգիսը կործանում է բազիլը: Ձայրացած ամբոխը հարձակվում է Սուրբ Սարգիսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Սարտիրոսը:

Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ աներեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Սուրբ Սարգիսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգիսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում Համիան քաղաքում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սուրբ Սարգիսի մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Առաջավորաց պահք

Սուրբ Սարգիսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված **Առաջավորաց պահքը**: Պահքը տեւում է հինգ օր (այս տարի՝ **հունվարի 30-ից փետրվարի 3-ը** ներառյալ):

Սուրբ Սարգիս. երիտասարդների եւ սիրո բարեխոս

Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունների համաձայն՝ Սուրբ Սարգիսը հովանավորել է Սասունցի Դավթին եւ Սասան բոլոր հերոսներին ոչ միայն ռազմի դաշտում, այլ նաեւ սիրո մեջ:

Սուրբ Սարգիս Ձորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երի-

տասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սուրբ Սարգիսը սիրո երազանքն իրականցող Սուրբ է:

Սուրբ Սարգիսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը:

Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրը արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար զնայ օտարություն՝ աշխատելու: Սակայն, մինչեւ այդ, Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ:

Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ Ղարիբի համար: Նա զրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չունեւ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, այլ կարոտով սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապրեն միասին:

Յոթ տարի շարունակ գիշեր ու գոյ աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տուն դարձի ճամփա ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքերով եւ

խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի. չի հասնի իր սիրած էակին: Նա ազնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է Սուրբ Սարգիսին՝ հայցելով արագահաս Սրբի օգնությունը:

Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ մտուցով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն եւ նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Ժողովրդական սովորություններից է նաեւ, երբ Սուրբ Սարգիսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երագահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխհնդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ուն մատուցարանի մեջ դրված պյուրի կամ փոխհնդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երագանքը:

Տոնի առթիվ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում:

Գարեգին Բ Ամենայն Հայոց հայրապետի տնօրինությամբ՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է **երիտասարդների օրհնության օր**: Այս տարի այն կնշվի **փետրվարի 4-ին**: Այդ օրը Սուրբ Սարգիս Ձորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ Պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգիսի տոնի կապակցությամբ, այս տարի եւս, ինչպես ավանդաբար, միջոցառումների ընդարձակ ծրագիր է նախապատրաստել Արարտյան Հայրապետական թեմը:



Աղոթք Սուրբ Սարգիսի բարեխոսության




Գերագույն պատվի՝
արժանացար՝
Բարեխոսելու
Բանն Աստծուն,
Աղոթքի՝ ընդունող,
Խնդրանքների կատարող,
Արագահաս
Սուրբ Սարգիս,
Բարեխոս մեր անձերի
համար ի Քրիստոս:
Նրան՝ Բարձրյալին,
վայել է փառք, իշխանություն
եւ պատիվ,
Այժմ եւ միշտ եւ
հավիտյանս հավիտենից,
Ամեն:

Ըստ Փալատոս Բուզանդի

Բյուզանդական Վաղես կայսրն արիստական աղանդի հետեւորդ էր եւ հալածում էր քրիստոնյաներին: Դրա համար պատժվում է եւ 378 թվականին սպանվում Աստծուց եղած հրաշքներով: Նրան սպանում են քրիստոնեության համար պայքարած սուրբ նահատակները, որոնց միանում է նաեւ Սուրբ Սարգիսը:

Սասունցի Դավթի հանդիպումը Սուրբ Սարգիսի հետ
(Քաղվածք «Սասնա ծռեր» էպոսից)

Դավիթ էլ տեղեն ետ դարձավ ու գնաց, կայնավ խանդութ խանունի փանջարի առեչ, ըսեց.
- Խանդութ խանուն, ես կերթամ կռիվ:
Քչեց, գնաց, շատ քիչ՝ Աստված գինա, մեկ էլ տեսավ յառջեւանց թոզ ու դունման կիզա:
Էկավ, տեսավ օր սրբի Սարգիսն է:
Դավիթ գնաց, օր սրբի Սարգիսին համբուրեր: Սըփ Սարգիս ըսեց.
- Հանե թո Սըփ Նշան, ես համբուրեմ, նոր դու ընձի համբուրե: Հանեց Սըփ Նշան, համբուրեց սըփ Սարգիս, էն լէ սըփ Սարգիսին համբուրեց:
- Դե գնա,- ըսեց,- Աստված խըտ քըզի էղնի: Ու քչեց ձին:
Քեռի թորոսիկ մնաց աղոթք էնելու:





Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղի համար։

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը.
- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)։

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնա-կանացման քարտի պատճենը.
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) *ինքնակենսագրություն*։ Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկա-յացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00 -ից մինչև ժամը 17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից**, Արարատի պետական քոլեջում, հասցեն ք. Արարատ, Խանջյան 67:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի մարտի 2-ին՝ ժամը 11:00-ին**, Արարատի պետական քոլեջում, հասցեն ք. Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով։ Էլեկտրոնային հասցեն՝ collegearat@mail.ru։

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Կիրառական հավելվածների ստեղծման միջոցներ», «Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման ներածություն», «Օբյեկտ կողմնորոշված մոդելի կիրառում» մոդուլների (86 դասաժամ) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորմամբ դասախոսի եւ «Խոհարարական գործ» մասնագիտության վարպետի թափուր տեղերի համար։

Մրցույթին մասնակցելու համար անձը Հաստատություն է ներկայացնում.

- 1) դիմում (Չեւ 1),
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Չեւ 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 1-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 14:00-ին**, Արարատի պետական քոլեջում, հասցեն ք. Արարատ, Խանջյան 67։

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով։ Էլեկտրոնային հասցեն՝ collegearat@mail.ru։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ*» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (23 դասաժամ), պատմության (20 դասաժամ), անգլերենի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաչարի։ Հարցազրույցի փուլի հարցաչարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձեւ 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 1-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 15-ին՝ ժամը 14:00-ին**, Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, հասցեն՝ Արամ Մամուկանի փող. 31։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 77-14-77 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Նոյեմբերյանի պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի «Խոհարարական գործ» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոսի (արտարարական ուսուցման վարպետի) թափուր տեղի համար։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. *հանձնաժողովի նախագահի անունով դիմում՝ նշելով այն աշխատատեղը որին հավակնում է (Չեւ 1),*
2. *փաստաթուղթ՝ (դիպլոմ) «Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային գրքույկի պատճեն,

3. *անձնագրի պատճեն,*
4. *սոցիալական քարտ,*
5. *ինքնակենսագրություն,*
7. *մեկ լուսանկար (3X4) չափի,*
8. *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,*
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ։ Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ։ Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թ. փետրվարի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից**։

Մրցույթը կկայանա **2023 թ. փետրվարի 14-ին, ժամը 11:00-ին**, Նոյեմբերյանի պետական քոլեջում, հասցեն ք. Նոյեմբերյան, Շիրազի 17։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Արմավիրի պետական բժշկական քոլեջ*» ՊՈԱԿ-ի «Ինֆորմատիկայի հիմունքներ» առարկայի (144 ժամ) դասախոսի թափուր տեղի համար։

Վարձատրությունը՝ յուրաքանչյուր պարապած ժամի համար 1400 (մեկ հազար չորս հարյուր) դրամ։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է հարցազրույցով։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. *հանձնաժողովի նախագահի անունով դիմում՝ նշելով այն աշխատատեղը որին հավակնում է (Չեւ 1),*
2. *փաստաթուղթ՝ (դիպլոմ) «Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային գրքույկի պատճեն,
3. *անձնագրի պատճեն,*
4. *սոցիալական քարտ,*
5. *ինքնակենսագրություն,*
7. *մեկ լուսանկար (3X4) չափի,*
8. *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,*
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են զինգրքույկ։ Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ։ Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թ. փետրվարի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից**։

Մրցույթը կկայանա **2023 թ. փետրվարի 10-ին, ժամը 14:00-ին, 15:00-ին**, Արմավիրի պետական բժշկական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 89-38-82 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «*Մալիշկայի հ. 1 միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաչարի։ Հարցազրույցի փուլի հարցաչարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 1-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 16-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի հ. 1 միջնակարգ դպրոցում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 19-23-57 հեռախոսահամարով։

Ա Ձ Դ

01.02. 2023թ.

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «*Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի «*Ռուսաց լեզու*» (188 դասաժամ), «*Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն*» (90 դասաժամ), «*Լոգիստիկ կապուղիներ*» (72 դասաժամ), «*Առետրային համակարգչային ծրագրեր*» («*ՀԾ - առետուր համակարգ*», 54 դասաժամ), «*Մոլիփտտերը եւ պաքարը դրանց դեմ*» (36 դասաժամ), «*Բանջարանաբուստանային մշակաբույսերի մշակության եւ բերքահավաքի տեխնոլոգիաները*» (60 դասաժամ), «*Ցանքաշրջանառության համակարգեր եւ նրանց առանձնահատկությունները*» (48 դասաժամ), «*Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրուՆտի պայմաններում*» (60 դասաժամ), «*Լանջերի վրա բազմամյա տնկաբքների հիմնման տեխնոլոգիաներ*» (72 դասաժամ), «*Չեռնէրեցություն*» (144 դասաժամ), «*Գրաֆիկական ինտերֆեյսի ծրագրավորում*» (108 դասաժամ), «*Դիմանիկ WEB կայքերի նախագծում*» (144 դասաժամ) առարկաների (մոդուլների) դասախոսի թափուր տեղերի համար։

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշյվ սահմանված պահանջները.

- *Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ։*

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. փետրվարի 1-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 16-ին, ժամը 13:00-ին**, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 55-22-72 հեռախոսահամարով։

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի Ն. Աճեմյանի անվան հ. 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «*Ֆիզիկա*» առարկայի (330 ժամ) դասախոսի թափուր տեղի համար։

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշյվ սահմանված պահանջները.

- *մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ուժի բարձրագույն կրթություն եւ վերջին տարւ տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առվելազն 5 տարվա աշխատանքային ստաժ։*

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն(Չեւ 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները ? ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև փետրվարի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 20-ին՝ ժամը 10:00-ին**, Երեւանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջում, հասցեն ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մուլիվական 37Ա։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 67-23-01, (010) 67- 24-43 հեռախոսահամարներով։

Քոլեջի մասին առավել մանրամասն՝ n2college.am:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի «*Կաթիլային ռոռզման համակարգերի մոնտաժում եւ շահագործում*», «*Սառնարանային տնտեսություն*», «*Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն*», «*Հաշվապահական հաշվառում*», «*Մասնագիտական մոդուլների եւ «Քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների հիմնահարցեր»* առարկայի դասախոսի թափուր տեղերի համար։

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական

Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսափողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես՝ հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքեն, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով զայթակղող:

Սիրելի Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու՛ ես՝ եւ բարոյապես, եւ նյութապես: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

* * *

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Krtutun» (education) weekly «КрТутун» (образование) еженедельник 12.10.200

Մայրաքաղաք

Քիչայնիլի-Վան, Էրեբունի-Երեւան... Քանի՛ դար կա այս անցումների միջեւ... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«Krtutun» (education) weekly «КрТутун» (образование) еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«Krtutun» (education) weekly «КрТутун» (образование) еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (170)



ՀԻՄՆԱԳԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄեժԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵՃ»
հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
31.01.2023թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ